ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՐԿՈՒ ՄԵԾ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ֆ. Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱԱ նախագահ, ՀՍՍՀ ԳԱԱ ակադեմիկոս

Լրացուն հայ ժողովրդի՝ 20-րդ դարի պատմության երկու կարևոր իրադարձությունների՝ արևմտահայության ցեղասպանության 80 և Հայրենական պատերազմում հաղթանակի 50-ամյա տարեդարձերը։

Արևմտահայության ցեղասպանությունը, որ առանձնահատուկ դաժանությամբ իրականացրեցին երիտթուրքերը 1915—1916 թթ., նախադեպը չունեցող ոճրագործություն էր՝ ուղղված հայ ժողովրդի էթնիկական գոյության դեմ։ Երիտթուրքական կուսակցությունը, օգտվելով համաշխարհային պատերազմի բերած քաղաքական քաոսից, տերությունների ու ժողովուրդների սուր հակամարտություններից, գործի դրեց Թուրքիայում բնակվող հայության բնաջնջման ծրագիրը։ Այն իրականացվեց նախապես մշակված պլանով, իբրև պետականորեն կարգավորված ու սիստեմատիկ գործողությունների մի ամբողջություն։ 1915 թ. ապրիլից ծայր առած այդ հրեշավոր հանցագործությանը Թուրքիայի կառավարողները ձեռնարկեցին ելնելով մեկ սևեռուն նպատակից սեփական մեթոդներով մեկընդմիշտ վերացնելու Հայկական հարցը, համոզված լինելով, որ ազատության ու անկախության, իր ճակատագիրը տնօրինելու ձգտումները հայության մեջ հնարավոր է ոչնչացնել միայն նրա գլխովին բնաջնջման միջոցով։ Արևմտահայության սպանդի ծրագիրը երիտթուրքերը հղացան ու իրագործեցին մեծագույն գաղտնիության պայմաններում։ Պատերազմը սկսվելուց հետո արևելյան վիլայեթներում ծայր առավ կոտորածների ալիքը։ 1914 թ. աշնանը Վանի և Էրզրումի (Կարին) վիլայեթներում թուրքական ու քրդական զինված ջոկատները կոտորեցին տասնյակ հազարավոր անմեղ մարդկանց։ Բանակ զորակոչված հայ մարտունակ բնակչությունը՝ հիմնականում երիտասարդներ, մեկուսացվեցին առանձին աշխատանքային գումարտակներում և ապա ոչնչացվեցին։ 1915 թ. սկզբներին թուրքական կառավարությունը սկսեց նահանգապետներին և տեղական այլ իշխանություններին հատուկ և գաղտնի հրահանգներ ուղղելու տենդագին գործընթացը՝ ցեղասպանությունը շուտափույթ և ամենայն խնամքով իրագործելու համար։ Կազմակերպվեց «Թեշքիլյաթը մախսուսեն»՝ հատուկ մի կազմակերպություն, որը պետք է իրականացներ հայ բնակչության կոտորածների ու տեղահանության գործը։ Կազմակերպությունը իր կոմիտեներն ուներ Կ. Պոլսում, Էրզրումում և Հալեպում։ Վերջինը՝ հայ աքսորյալների բեկորները հետագայում լիովին ոչնչացնելու համար։ Երիտթուրքերի և նշված կազմակերպության առաջնորդները ստեղծեցին չեթեների՝ քրեական ու ոճրագործ տարրերի ջոկատները, որոնց ձեռքերով գավառներում սկսվեցին ջարդերն ու կոտորածները։

Երիտթուրքական կենտրոնը ցեղասպանությունը իրագործում էր որոշակի հանգրվաններով. 1915 թ. ապրիլի 24-ին Կ. Պոլսում ձերբակալվեցին հայ մտավորականության ներկայացուցիչները, որոնք սպանվեցին աքսորի ճանապարհներին։ Դա ոճրի ազդանշանն էր։ Այս կամ այն տարբերությամբ այն կրկնվեց ու շարունակվեց Արևմտահայաստանում և կայսրության հայաբնակ մյուս շրջաններում։ Մտավորականությանը գլխատելուց հետո ոչնչացվում էին ընդդիմության ընդունակ տղամարդիկ, իսկ կանայք, ծերունիները և երեխաները ենթարկվում էին զանգվածային տեղահանության։ Կանանց և երեխաների մի մասին տիրացան քրդերն ու թուրքերը՝ մահմեդականացնելով

նրանց։ Միայն 1915 թ. երեք ամսվա ընթացքում (մայիս-հուլիս) իր բնօրրանից արմատախիլ արվեց 1 մլն 200 հազար հայ։ Շուտ մեկ միլիոն հայ սպանվեց աքսորի ճանապարհներին, իսկ Հալեպ և Մոսուլ հասավ ընդամենը մի քանի տասնյակ հազար աքսորյալ։ Ցեղասպանության հետևանքով ոչնչացվեց մեկ և կես միլիոն հայ, Արևմտահայաստանը իսպառ զրկվեց հայ բնակչությունից։

Արևմտահայության ցեղասպանությունը երիտթուրքերին հաջողվեց իրականացնել մի շարք պատճառներով. նախ՝ թուրքական պետական ահռելի մեքենայի և հայ անզեն բնակչության ուժերի և հնարավորությունների վիթխարի տարբերությունը՝ հօղուտ թուրքերի։ Այնուհետև, հայ ազգաբնակչության՝ ամենուրեք թուրքերով ու քրդերով շրջապատված լինելու իրողությունը։ Ցեղասպանությունից դեռևս շատ առաջ Արդուլ Համիդը, իսկ ապա երիտթուրքերը հայերի, իբրև օսմանյան պետության թշնամի տարրի դեմ էին տրամադրել թուրք ազգաբնակչությանը, հմտորեն օգտագործելով նրա դարավոր տգիտությունն ու հրահրելով նրա կրոնական մոլեռանդությունը։ Հայ ազգային կուսակցություններն այս պայմաններում ի սորու չեղան կանխելու ժողովրդի սպանդը, թեև մասամբ, որոշ շրջաններում, կարողացան կազմակերպել նրա պաշտպանությունը։ Այսուհանդերձ, այնտեղ, որտեղ հայերն ապրում էին համախումբ, նրանք դիմադրեցին թուրքական ջարդարարներին։ Այդպիսի զինված դիմադրություն հայերը ցույց տվեցին 1915 թ. Վանի հերոսամարտում, այնուհետև Մուշի, Սասունի, Սվեդիայի (Մուսա լեռ), Շապին-Գարահիսարի, Ուրֆայի ինքնապաշտպանական մարտերում։ Ցեղասպանությունը վերապրող հայ բեկորները գաղթեցին Անդրկովկաս, մի մասը անցավ Ռուսաստան, եվրոպական երկրներ, ԱՄՆ և այլուր։ Այսպես կազմավորվեց ժամանակակից սփյուռքը։ 1916—1922 թթ. ընդհատումներով թուրքերը շարունակեցին հայերի կոտորածներն այնտեղ, որտեղ հնարավոր էր (Արևելյան Հայաստան, Թուրքիայի արևմուտք՝ Զմյուռնիա)։

Հայտնի է, որ միջազգային հանրությունը իրավական բնագավառում սահմանել է ցեղասպանության պատժելիությունը՝ որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանգագործություն (ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1948 թ. դեկտեմբերի 9-ի Կոնվենցիան)։ Հայերի զանգվածային բնաջնջումներն Օսմանյան Թուրքիայում ոչ այլ ինչ են, բայց եթե այդպիսի հանցագործություն։ Եվ այն, որ միջազգային հանրային կարծիքն այն համարում է իրողություն, թույլ է տալիս կարծելու, որ արդեն իրավականի վերածվելու միտումներ ունեցող բարոյական համոզմունքն ի վերջո կստանա իր վերջնական ու որոշակի տեսքը՝ արևմտահայության ցեղասպանությունը իրավականորեն ճանաչվելու համար։

Մեծ եղեռնից հետո, այսուհանդերձ, հայ ժողովուրդը կարողացավ ամոքել խոր վերքերը և ստեղծել իր ինքնուրույն պետականությունն Անդրկովկասում։ Հայաստանի առաջին հանրապետությանը հետևած Խորհրդային Հայաստանում հայ ժողովուրդը կարողացավ զարգացնել իր տնտեսությունը, գիտությունն ու արվեստը՝ սեփական մշակութային արժեքներով մասնակցելով արդի քաղաքակրթության երթին։

Վերջին ութսունամյակում հայ ժողովրդին վիճակված էր ևս մեկ ծանր փորձություն՝ ԽՍՀՄ մյուս ժողովուրդների հետ կրել Հայրենական պատերազմի մեծագույն դժվարություններն ու զրկանքները և կիսել ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի բերկրանքը։

Հայրենական պատերազմի առաջին իսկ օրերից հայ ժողովուրդը նշանակալից ավանդ ներդրեց մեծ հաղթանակի գործում։ Ձևավորվեցին հայկական շուրջ 10 ռազմական զորամիավորումներ, այդ թվում՝ 89-րդ, 390-րդ, 408-րդ, 409-րդ հայկական դիվիզիաները։ Հայ ժողովրդի զավակները պատերազմի ամբողջ ժամանակաշրջանում՝ 1941—1945 թթ. մարտնչել են թե ինտերնացիոնալ զորամասերում և թե ազգային դիվիզիաներում, դաշնակիցների բանակներում, Դիմադրական և պարտիզանական շարժումներում։ Մեծ հայրենակա-

նին մասնակցել են շուրջ 600 հազար հայեր, նրանցից 70 հազարը իրենց քաջագործությունների համար արժանացել են կառավարական շքանշանների ու մեդալների, 106-ին շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում, այդ թվում՝ մարշալ Հովհաննես Բաղրամյանին և օդաչու Նելսոն Ստեփանյանին՝ կրկնակի հերոսի։ Հովհաննես Բաղրամյանին շնորհվել է Խորհրդային Միության մարշալի, Համազասպ Բաբաջանյանին՝ զրահատանկային զորքերի գլխավոր մարշալի, Սերգեյ Խանփերյանցին (Խուդյակով)՝ ավիացիայի մարշալի, Հովհաննես Իսակովին՝ նավատորմի ծովակալի կոչում։ 50 մարդ արժանացավ դեներալի կոչման։ Թշնամու դեմ հայ մարտիկները անձնուրաց կռվում էին՝ թիկունք ունենալով նաև Հայաստանը, որի ժողովուրդը իր անձնուրաց ու հայրենանվեր աշխատանքով արեց ամեն ինչ՝ հաղթանակի գործն ապահովելու համար։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հաղթանակի կոփման գործում իրենց ավանդն են ներդրել հայ գիտնականները։ Նրանց մի մասը մեկնեց ռազմաճակատ՝ թողնելով գիտահետազոտական ինստիտուտը, լաբորատորիան և գրիչը փոխարինեց զենքով։ Նրանցից շատերը տուն չվերադարձան՝ իրենց կյանքը զոհելով հայ ժողովրդի այն զավակների հետ, որոնց երբեք չի մոռանում հայ երախտագետ ժողովուրդը և որոնք իրենց արյամբ նվիրագործեցին մեծ հաղթանակը։

Պատերազմի դաժան պայմաններում Հայաստանում ևս առաջ մղվեց գիտատեխնիկական միտքը, արվեցին երկրի պաշտպանության շահերից բխող հայտնագործություններ, որպիսիք արմատավորվեցին նաև ռազմական արդյունաբերության մեջ, առաջ մղեցին ռազմական արդյունաբերության զարգացումը։ Հանրապետությունում որակական արժեք ստացած գիտական ներուժը հնարավորություն տվեց պատերազմական պայմաններում, երկրի բուն գոյությանը դեռևս իրապես սպառնալիք ներկայացնող ֆաշիստական վտանգի պայմաններում ստեղծել Հայաստանի գիտությունների ակադեմիա (1943 թ. նոյեմբեր), որը կազմակերպվեց Միութենական ակադեմիայի հայկական բաժանմունքի հիման վրա։ Թիկունքում և ռազմաճակատում Հայաստանի գիտությունների ակադեմիայի աշխատակիցները նվիրումով կատարեցին իրենց հայրենասիրական պարտքը։ Հայաստանի գիտությունների ակադեմիան իր անդրանիկ պրեզիդենտի՝ Հովսեփ Օրբելու, փոխպրեզիդենտներ Վիկտոր Համբարձումյանի, Վարդան Գուլքանյանի ղեկավարությամբ աչքի ընկնող դեր խաղաց հայ ժողովրդի գիտության զարգացման գործում։ Պատերազմի ավարտից հետո ռազմաճակատից վերադարձած գիտնականները և նոր, երիտասարդ կադրերը, որոնք իրենց մարտական մկրտությունը ստացել էին մարտադաշտերում, նոր թափ ու ավյուն հաղորդեցին գիտությունների ակադեմիային՝ նրան առաջ մղելով գիտության առաջավոր օջախների շարքը։ Անուրանալի են Հայաստանի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Վիկտոր Համբարձումյանի, Հովսեփ և Լևոն Օրբելիների, Աբրահամ և Արտյոմ Ալիխանյանների, Ալեքսանդր Հակոբյանի, Վաչե Իսագուլյանցի, Միքայել Թումանյանի, Ալեքսանդր Թամաշևի, Ստեփան Մալխասյանի, Հրաչյա Աճառյանի, Մանուկ Աբեղյանի, Արսեն Տերտերյանի, Գրիգոր Ղափանցյանի և այլոց ծառայությունները։

Երկրորդ համաշխարհային պատերազմում տարած հաղթանակում վճռական դերը պատկանում է Խորհրդային Միությանը, որը ծանրակշիռ ավանդ ներդրեց ֆաշիզմի ջախջախման գործում։ Դրանում իր ավանդն ունի նաև հայ ժողովուրդը, որը հաղթանակը դիմավորեց բազմաթիվ զոհերի ու համազգային փորձությունների գնով։

Այսօր, երբ հայ ժողովուրդն ապրում է իր հնամենի պատմության և զարգացման նոր փուլը, ստեղծել է իր ինքնուրույն և անկախ պետականությունը քաղաքակրթության ընթացքում սեփական տեղն ապահովելու համար պետք է իրականացնի ստեղծագործ աշխատանքի առջև դրված իր խնդիրները, գիտության, արվեստի և առհասարակ նորագույն մշակույթի ար-

ժեքներ ստեղծելու խնդիրները։ Դրան են կոչում նրա անցած հազարամյակների դժվարին ուղիները, մեր՝ արդեն ամփոփվող դարի երկու մեծագույն փորձությունների՝ Մեծ եղեռնի և Հայրենական պատերազմի արհավիրքների հաղթահարումը։

ДВА ВЕЛИКИХ ИСПЫТАНИЯ АРМЯНСКОГО НАРОДА

Президент НАН РА, академик НАН РА Ф. Т. САРКИСЯН

Резюме

Исполнилось 80-летие геноцида армян и 50-летие со дня победы в Великой Отечественной войне.

Геноцид западных армян, осуществленный младотурками в 1915—1916 гг., был беспрецедентным преступлением против физического существования армянского народа. Воспользовавшись хаосом, вызванным мировой войной, острым антагонизмом держав, младотурецкое правительство решило претворить в жизнь программу истребления проживающих в Турции армян. К осуществлению этого чудовищного преступления они приступили, исходя из навязчивой идеи—собственными методами раз и навсегда покончить с Армянским вопросом, будучи уверенными в том, что стремление армян к свободе и независимости можно искоренить лишь путем их полного уничтожения.

В результате погромов и депортации только за три месяца (май—июль) 1915 года лишились своей родины 1.200.000 армян. Около миллиона армян было истреблено в результате погромов во время депортации в Алеппо, Мосулу, куда дошло всего несколько десятков тысяч человек.

Было уничтожено 1.500.000 человек, таким образом, Западная Армения полностью лишилась своего коренного населения—армян. Тем не менее в местах компактного проживания армяне противостояли турецким погромщикам. Вооруженное сопротивление в 1915 г. оказали армяне во время героической обороны Вана, затем в самообороне Муша, Сасуна, Сведии (Муса-даг), Шапин-Гарахисара, Урфы.

После геноцида, несмотря на огромные потери, армянский народ сумел создать самостоятельное государство в Закавказье (1918—1920). После образования первой Армянской республики—Советской Армении армянский народ сумел развить свою экономику, науку и искусство, вкладывая свои культурные ценности в современную цивилизацию.

В последнее восьмидесятилетие на долю армянского народа выпало еще одно суровое испытание—вместе с другими народами СССР пережить тяготы Великой Отечественной войны и разделить радость победы над фашизмом.

С первых же дней войны армянский народ внес значительный вклад в дело великой победы. Было сформировано около 10 армянских войсковых соединений—89-я, 390-я, 408-я, 409-я армянские дивизии и др. Сыны армянского народа на протяжении всей войны—с 1941 по 1945 гг. сражались как в интернациональных военных частях и национальных дивизиях, союзнических войсках, так и принимали участие в партизанском движении и в движении Сопротивления. В Великой Отечественной войне участвовало около 600 тыс. армян, 70 тыс. из них были удостоены правительственных орденов и медалей, 106 армянам было присвоено звание Героя Советского Союза, в том числе—марша-

лу Оганесу Баграмяну и летчику Нельсону Степаняну как дважды герою. Оганесу Баграмяну было присвоено звание маршала Советского Союза, Амазаспу Бабаджаняну—главного маршала бронетанковых войск, Оганесу Исакову—адмирала флота и Сергею Ханферянцу (Худякову)—маршала авиации. 50 человек были удостоены звания генерала.

В годы Великой Отечественной войны свой вклад в дело победы внесли и армянские ученые, часть которых, оставив научно-исследовательские институты, лаборатории, отправилась на фронт, сменив перо на оружие. Многие из них не вернулись, отдав свои жизни вместе с теми, которых не забывает благодарный армянский народ и которые своей кровью добились победы.

В суровых условиях войны в Армении был задействован весь ее научно-технический потенциал. Исходя из интересов обороны страны были сделаны научные открытия, которые были внедрены также в военную промышленность, способствуя тем самым развитию военной индустрии. Получивший качественное значение внутренний научный потенциал дал возможность в военных условиях и в условиях реальной фашистской угрозы стране на основе Армянского филиала Союзной Академии создать Академию наук Армении (ноябрь 1943 г.).

Решающую роль в победе во второй мировой войне сыграл Советский Союз, русский народ, который внес весомый вклад в дело разгрома фашизма. Свою лепту в это внес и армянский народ, встретивший победу ценой многих жертв и испытаний.